Հանկարծ մեքենան կանգ առավ:

Շոֆերն ավտոմոբիլից դուրս յեկավ, գլխարկը վերցրեց ու լուռ կանգնեց:

—Մեքենան փչացել է,—հարցրեց հարուստը: Շտապիր, ժամի չորսին գնացքը մեկնում ե. հինգ ըրպե յե մնում:

Շոֆերը նայեց ժամացույցին և ասաց.

—Հիմա Մոսկվայում թաղում են Լենինին՝ ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդին:

Սմեն տեղ կյանքը հինգ ըրպեյով կանգ ե առնում:

—Վաղվանից դուք՝ ել իմ շոֆերը չեք,—բարկացավ հարուստը:

23. ՍՏԱՆԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻՑ

Մեր մեծ ուսուցիչ, սիրելի բարեկամ,  
ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Իոսիֆ Վիսարիոնովիչ, մեր հարազատ, մեր սիրելի, մեր մեծը: «Հիմա ավելի հեշտ ե դարձել ապրելը, ավելի ուրախ ե դարձել կյանքը» — ձեր այս խոսքերը մարդ ուզում ե կրկնել շատ և շատ անգամ, մարդ ուզում ե յերգել զբանք: Ավելի հեշտ ե դարձել ապրելը, ավելի ուրախ ե դարձել կյանքը, փորովհետև մեր կուսակցությունը, ձեր առաջնորդությամբ, առաջ ե տանում յերկիրը դեպի սոցիալիզմ, դեպի կոմունիզմ: Վորովհետև մեր կուսակցությունը և դուք առաջինը, Իոսիֆ Վիսարիոնովիչ, մեզ զաստիարակում եք, կոչում ու

աճեցնում: Մենք ձեր սաներն ենք, մենք ստալինյան հավատարիմ աշակերտներն ենք: Մեր մեջ յեռում ե ամեն ինչ, ալեկոծվում ե ամեն ինչ, մենք լի յենք այնպիսի զգացմունքներով, փորոնք դժվար ե արտահայտել: Իուք ասում եյիք, թե ստալինանոյյան կայծից կրակ բոցավառվեց, սակայն ստալինանոյյան կայծը բոցավառեցիք դուք, մարդկանց նկատմամբ ուշադիր լինելու ձեր լողունգով, ձեր սիրով դեպի ժողովուրդը: Այսօրվա ձեր ճառով դուք ավելի ու ավելի յեք բոցավառում մրցության այդ բոցը, փորն ավելի կկոփի մեզ ու մեր ամբողջ հայրենիքը և ավելի հզոր ու անխորտակելի կդարձնի այն:

Մենք պատրաստվում ենք մեկնել մեր հայրենի շախտերը, զործարանները և յերկաթուղիները: Մենք տանում ենք մեզ հետ ստալինյան գործի կայծերը և կտարածենք զբանք մասսաների մեջ: Մենք ստալինյան տոկունությամբ կաշխատենք հասնել աշխատանքի սոցիալիստական արտադրողականության: Մենք կաճեցնենք կոմունիզմի այն սերմերը, փորոնք գտաք դուք ձեր խորաթափանցությամբ ստալինանոյյան շարժման մեջ: Այո, այդ սերմերն արդեն հասունանում են, իսկ դուք այն արեզակն եք, փորի տակ ծլում են նրանք փորպես փարթամ ծաղիկներ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Կոփել — ամբացնել, պնդացնել, կռել:  
Սան — աշակերտ, ձեռքի տակ սնած, մեծացրած:  
Շախտ — հանքահոր:  
Խորաթափանց — սրամիտ, շատ խելացի:

24. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 15 ՏԱՐԻՆ

Տասնեկինգ տարում յերկրում ավերակ,  
Վոր տեւել եր լոկ հյուղեր գեանափոր,  
Վոր մարխ եր վառել և ձեթի ճրագ, —  
Նոր շեներ ահա, տներ լուսավոր,  
Կայաններ, հանքեր, շենքեր վիթխարի, —  
Անցել ե միայն տասնեկինգ տարի...

Քո անհատների հանքերի քարից  
Կանգնել ես արդեն դու բազում շեներ,  
Գործարաններ ես կանգնել վիթխարի,  
Ամայի յերկիրդ անճանաչ շինել,  
Յելել կառուցման մե՛ծ ճանապարհի,  
Կառուցել, կերտել տասնեկինգ տարի:

Մահվան ողակով քեզ շրջապատող  
Ուժերի տեղ այն՝ խեղդող ու գերող —  
Շրջապատված ես կամքդ պողպատող  
Դու յեղբայրական ժողովուրդներով, —  
Յե՛վ վարում ե մեր նավը վիթխարի  
Ղեկավարը նո՛ւյն լե՛ւինյան դարի:

Յե՛վ արդ՝ քո անդուլ յեռանդով հպարտ,  
Հպարտ քո տարած հաղթանակներով,  
Քո յեղբայրակից, անբաժան, անպարտ  
Ժողովուրդների հո՞ր շարքերով,  
Հանճարով հպարտ քո Ղեկավարի՝  
Տոնում ես փառքիդ տասնեկինգ տարին...

Հյուղ — խրճիթ:  
Լոկ — միայն:  
Բազում — շատ:  
Այդ — այժմ, հիմա:  
Կերտել — շինել:  
Անպարտ — անմեղ:

25. ԳԻՔՈՐԸ

(Հատված)

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ  
բազազ Արտեմի տանը Պայմանն այն եր, վոր  
Գիքորը պետք ե տունը մաքրեր, ամանները լվա-  
նար, վոտնամանները սրբեր, դուքանը բաժին  
տաներ ու ես տեսակ ծառայություններ՝ մինչև  
մի տարի:

Մի տարուց յետը բազազը նրան պետք ե տա-  
ներ դուքան, շիներ դուքանի աշկերտ, ու եսպես  
Գիքորը պետք ե բարձրանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ, — ասավ բա-  
զազը պայմանը կապելիս: — Թե դրուստը կուզես,  
դեռ դո՛ւ պետք ե տաս, վոր քու փորդին բան ե  
սովորելու: Ա՛խր, իսկի բան չգիտի...

— Վճրտեղից գիտենա, խաղեյին ջան, — պա-  
տասխանեց Համբոն, — վոր գիտենար ել ո՛ւր կբե-  
րեյի. յես ել բերել եմ, վոր բան սովորի...

— Կսովորի, ամեն բան կսովորի:

— Իմ դարդն ել են ա, ադա ջան, վոր մարդ  
գառնա, յեղու սովորի, նստե՛լ-վերկենալ սովորի,

մարդ ճանաչի, վոր աշխարհքումն ինձ նման խեղճ  
ու գուրկ չմնա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս  
գնաց բարձր ձենով հրամայելով՝ «Չայ բերեք, հայ  
բերեք սրանց համար...»:

Հեր ու վորդի նստած եյին բազազ Արտեմի  
խոհանոցում:

— Իե, հիմի դնւ գիտես, Գիքոր ջան, տեսնեմ  
ինչ տեսակ տղա յես դուրս գալի... հենց պետք ե  
անես, վոր... յես ինչ գիտեմ... ով տեր աստո՞՞՞—  
մոնչաց Համբոն ու չիբուխը լցրեց:

— Մտիկ արա հա՛— ձեռնաքաշություն չանես:  
Կարելի յա քեզ փորձելու համար փող վեր գցեն,  
մոտենաս փոչ: Թե վերցնես ել, տար ասա՝ «խա-  
նում, ես ի՞նչ փող ա, ետեղ վեր ընկած եր. աղա,  
ես բանն ետեղ գտա», թե չե...

Վախտ ու անվախտ դես-դեն չընկնես, ձեռք  
ընկած փողը բոռ ու փուչ չանես, հազար ու մի  
պակասություն ունենք: Քեզ ել լավ պահիր, գի-  
շերը բաց չըլես, մըսես փոչ... Մինմին յեկողի հետ  
գեր զրկի...— մերթ-մերթ չիբուխը բերանից հա-  
նելով վորդուն խրատում եր Համբոն: Այնինչ Գի-  
քորը ննջում եր:

— Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կե-  
րակրի թերմացքը կտան, շատ անգամ ել իրենք  
կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն  
եղ ա... Որեր են կմթնեն, անց կկենան...

Շարունակում եր հերն իր խրատները, բայց  
Գիքորը հորը թինկը տված՝ քնել եր արդեն:

Են յերկու որը նա աչքան բան եր տեսել,  
ես ու են կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին:

1. Ինչո՞ւ համար գյուղացի Համբոն իր վորդի Գիքորին  
քաղաք տարավ:

2. Ի՞նչ պայմաններով վաճառականը վարձեց Գիքորին:

## 26. ՆԵՍՈՑԻ ՔԱՐԱԲԱՂՆԻՍԸ

Կիրակոսը մըսել եր, անկողին եր ընկել,  
տանջվում եր տաքության մեջ: Հարևանները հի-  
վանդի շուրջը հավաքված, ողեն լիքը, զրույց եյին  
անում, չիբուխ քաշում:

— Տղերք, սա վոր քրտնի վոչ, բան չի դառ-  
նար: Յեկեք սրան մի քարաբաղնիս անենք,— ծխի  
միջից առաջարկեց Նեսո բիձեն:

— Հա, եղ խելքս կարեց,— հավանություն  
տվեց մի ուրիշը:

— Դրան ել ուրիշ ճար չկա,— ձեն տվին ես  
ու են կողմից:

— Կիրակոս...

— Հը՛:

— Ասում ենք՝ քարաբաղնիս անենք,— ինչ ես  
ասում:

— Վախենում եմ... չգիմանամ...

— Տո՛, կգիմանաս, յերեսա հո չե՞ս:

— Դե... դուք գիտեք... ձեզ... մատաղ:

— Աղջի, պղինձը շուր լցրեք: Մի փեշ ել քար  
բերեք, կրակին ածեք տաքանան:

Պղինձը զրին կրակին, քարերը ածին կրակի  
մեջ ու նստեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե  
քանի հոգի յե ազատվել քարաբաղնիսով Մատղա-  
շենց Դանելը, Մաթոսենց Մինասը, Ծատուրանց

Մեփանը, Մաշկափորանց Միոն—մինչև վոր ջուրը  
յեփ յեկավ, քարերն ել կարմրեցին:

— Դե ժամանակն ա, վեր կացեք:

— Տղերք, վախում եմ... կանչեց հիփանդը:

— Դու սուս կաց: Աղջի, մի յերկու հաստ լեհեր  
բերեք, մի չորս-հինգ հոգի ուժով աղերք ել յեկեք  
եսանդ:

Շորերով փաթաթած յեման ջրով լիքը  
պղինձն ու հիփանդին դրին իրար հետ, կարմրած  
քարերը լցրին ջրի մեջ. քարերը թշտացին, ամպի  
նման գորրջին սկսեց բարձրանալ, շտապով վեր-  
մակները ծածկեցին ու չորս կողմից վրեն նստո-  
ւեցին:

— Վա՛յ, խեղդվեցի,— խուլ գոռում եր հի-  
փանդը:

— Խեղդվիլ չի... աղերք, պինդ նստեք: Գլուխն  
ու վոտները ամուր պահեք:

Հիփանդն աղաղակում եր, որհասական ջանքեր  
եր անում շարժվելու, բայց հինգ-վեց աժգահա  
աղամարդ վրեն նստած՝ չեյին խողնում:

— Ո՞ւր ես գնում,— կանչում եյին ես ու են  
կողմից, վերիից սեղմում ու հռնում:

— Հիմի թե չբրանի:

Ու նեսո բիձեն, հիփանդի վրեն նստած չի-  
բուխը բերանին՝ շարունակում եր իր պատմու-  
թյունը:

Նեսո բիձու պատմությունը վերջացավ. վեր  
կացան, վերմակները յետ քաշեցին: Գորրջին ողեն  
բռնեց: Բայց Կիրակոսը...

— Կիրակոս, — ձեն տվին, շարժեցին, քաշքշե-  
ցին: Կիրակոս չկա:

— Ա՛յ տղա, ես վհնց ելավ,— մոլորված ար-  
տասանեց Նեսոն:

Մյուսները լուռ եյին:

— Վա՛յ, տունս քանդվեց... — ծղրտաց Կիրա-  
կոսի կինը: Իրար հրելով աղերքը գուրս եկան  
կտուրը: Ու մինչդեռ ներքև Կիրակոսի կինը սուգ  
եր անում, կտերը արևում նստոտած աղերքը  
պատմում եյին, թե քանի-քանի հոգի յեն խեղդ-  
վել քարաբաղնխսից:

— Տո՛ւ, դե ճակտի զիր ե, ելի, հո նրանց ել  
Նեսոն չի խեղդեր:

Նեսոն լուռ, գլուխը կախ արած, լուռ եր ու  
չիրուխ եր քաշում:

## 27. ՊՍՅԹՅՈՒՆԸ ՀԱՆԲՈՒՄ

### 1

Յես բանում եյի հանքի խորքում: Գործիքովս  
քանդում եյի ապառաժը: Ընկերս ծալապատիկ  
նստած, ճրագը ձեռքին լույս եր անում:

Հանկարծ մեր ականջին հասավ մի խուլ, հե-  
ռավոր զզրոյուն:

— Ի՞նչ կա,— բացականչեց ընկերս, վոտի  
կանգնելով փախեցած:

Մեր մոտից մի մարդ անցավ վազեվազ: Նա  
հեռում եր:

— Ի՞նչ եք կանգնել անշարժ,— գոչեց նա  
առանց կանգ առնելու, — չլսեցի՞ք... գաղի պայ-  
թյունը... Շուտ փախեք գուրս:

Յե՛վ անհետացավ: Նույն վայրկյանին մեր

ճրագները հանգան, ու մենք թաղվեցինք թանձր խավարի մեջ: Ողբ սաստիկ խեղդող դարձավ:

Շնչասպառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափոխում:

Հանկարծ մեր առաջ թանձր ծխի մի պատ ե բարձրանում: Մռայլ, գարշահոտ ծուխը պատել ե մեզ չորս կողմից, այրում ե մեր դեմքերը: Գլուխս պտույտ ե գալիս: Խեղդվելու վրա յենք: Յեվ խելագարի պես յետ ենք վազում այս դժոխքից:

Բայց ուր ել վոր գնում ենք, այդ անիծած գաղերը մեր ճանապարհը կարում են ու յետ հրում:

Միևնույն տեղում չենք կարողանում մնալ, զես ու զեն ենք նետվում: Շրջում-պտտվում ենք այդ մթին հանքում:

2

Գնում ենք անվերջ նեղ անցքերով, բարձրանում ենք, իջնում, մազլցում, սահում:

Անցքի վերի մասում մի ինչ-վոր պատնեղի յենք հանդիպում: Ձեռքերով շոշափում ենք ու ամբողջ մարմնով ցնցվում: Իհակների մի ամբողջ զեղ ե կուտակված ե զես ու զեն ցրված:

Իհակները զեռ սառած չեն: Խեղճե՞ր. յերեկ նրանց աշխատանքի տեղը շատ մոտիկ ե յեղել պայթյունի տեղին ու մեզանից շուտ են յենթարկվել վատ գաղերի ազդեցությանը: «Անշուշտ մեզ ել նույն վիճակն ե սպասում մոտ ապագայում»,—մտածում եմ յես ու դարձյալ ցնցվում:

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը ե գնում... անվերջ գնում:

Բոլորս լուռ ենք, ախուր մտածմունքների մեջ խորասուզված:

Հանկարծ մեր առաջ մի բան ե շարժվում մթության մեջ:

Լսվում ե մի ձայն, մի մարդկային ձայն, վորի մեջ մի անսահման ուրախություն եր հընչում:

— Ահա, ահա գալիս են մեզ ազատելու:

Այդ մի ձայնից հետո լսվում ե յերկրորդը, յերրորդը: Նրանք հինգ հոգի եյին: Տեղներիցը վեր են կենում ու վազում դեպի մեզ:

Մթության մեջ փնտոում ենք իրար, ձեռներս պարզած, աչքակապուկ խաղացող յերեխաների նման: Տալիս ենք մեր անունները ե հայտնում, վոր մենք ել նրանց նման հանքի դժբախտ բանտարկյալներ ենք: Դժվար ե նկարագրել խեղճերի հուսահատությունը...

Առաջարկեցինք, վոր մեզ միանան ու գնանք միասին հանքի յելքը փնտոելու: Յեվ գտանք...

Սակայն քսան որ գետնի տակ, խավարի մեջ, անտանելի տանջանքից հետո:

28. ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺ Ե

Մի մարդ յոթ վորդի ուներ: Նրանք հաճախ վեճի եյին բռնվում իրար հետ: Այդ պատճառով ել նրանց գործը հաջող չեր գնում:

Մի անգամ հայրը վորդիներին իր մոտ կանչեց. նրանց առջև դրեց ճիպոտներից շինած մի ցախավել ե ասաց. «Ով ձեզնից այս ցախավելը շարդել կարողանա, նրան մեծ գումար կտամ»:

Վորդիներից յուրաքանչյուրը փորձեց կտորել,  
բայց զուր:

Հայրն ասաց. «Մհ, վորդի՛ք, դուք ել տղամարդ  
եք. դրանից ել հեշտ բան կա»:

Նա քանդեց ցախավելը և մեկը մյուսի յետե-  
վից ջարդեց ճիպոտները:

«Այդ հո շատ հեշտ ե, — բացականչեցին վորդի-  
ները, — յերեխան ել կարող ե այդպես ջարդել»:

Հայրն ասաց. «Վորդիք, տեսնում եք գետնին  
վայր ընկած ճիպոտները, բանի միասին եյին կա-  
պած ջարդել չեր լինում. այդպես ել դուք. բանի  
կոլեկտիվի մեջ լինեք, վոչ վոք չի կարող հաղ-  
թել ձեզ, թե չե ձեր բանը բուրդ ե»:

## 29. ՀԵՂԵՂԸ

— Հեղեղ, հեղեղ, — կանչում եյին ամեն կող-  
մից, կանչում սարսափահար և փախչում խենթե-  
րի նման, առանց շուրջը նայելու:

Հորդահոս գետը փլցրել եր վերևում գտնված  
հողաբլուրը և ցեխի ահագին լեռը բերում եր գյու-  
ղաքաղաքի վրա: Յնցվում եր գետինը, տները  
միմյանց յետևից անհետանում եյին, ծառերը  
ճարճատում, և մարդ ու կին, ով վոր կարող եր,  
գալիս, լցվում եյին մեր բարձրագիւր բակը:

Հայրս... ո՛, վոչ մի բոպե չի հեռանում նա իմ  
աչքից: Այդ բոպեյին նա մոռացել եր մեզ և առանց  
գլխարկի դուրս եր նետվում անդադար, գնում եր  
աղետի վայրը, մարդկանց ոգնում, ցեխի մեջ  
մինչև ծնկները խրված՝ մանուկներին խլում հե-  
ղեղի բերնից:

— Մի՛ գնա, — գոռում եր մայրս, — մի՛ գնա:

— Թող, կին, այնտեղ մարդիկ են ոգնուլթյան  
կանչում, հասկանում ես, մարդիկ:

ԲՍՈՒ ԲՍՅՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Հորդահոս — աստ, վարար հոսող, վազող:

## 30. ՌՈՒՇՍՆԻ ՔՍՐՍՓԸ

Չաթնանց գերդաստանն անհուշ որերից  
Յեղել ե գյուղում անվանի, հարուստ:  
Նա գավթել ե միշտ լավը հողերիս  
Յորենն ե փտել Չաթնանց ամբարում:  
Աճել ե ժամ ու ամպուհովանու տակ,  
Վորպես դարավոր մի ընկուղենի:  
Փռելով գյուղում արմատներն անտառ՝  
Ծծել ե նրա հյուսթը վայրենի:  
Իշխել ե, գյուղում վորպես տանուտեր,  
Վորպես մի վայրի կառավարություն:  
Յե՛վ կուչ ե յեկել թշվառ գյուղացին  
Չաթնանց դարավոր ընկուղենու տակ՝  
Աչքերը հառած ավելցուկ հացին,  
Իր վողորմելի բախտին անգիտակ:  
Իսկ Չաթնանց Սանթրոսն անողոր բահով  
Ճեղքել ե գյուխն աղքատ Ռուշանի,  
Հափշտակել ե ընտիր սեահոզն  
Ու սովի մատնել մի տուն ընտանիք:  
Մեռել ե Ռուշանն եզ վերքից հետո  
Յե՛վ ման ե յեկել Սանթրոսն անպատիժ,  
Դատարան մտած հիսուն մանեթով  
Դարձել ե չհաս, չենթակա դատի:

Չավթել են այսպես ու կերել մարսել  
Չաթնանք Ռուշանի հողը բերքառատ:  
Բայց հին անունն է վրան մնացել:  
Գյուղում ասում են «Ռուշանի քարավի»:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Վոր շրջանի գրվածք է «Ռուշանի քարավի»:
2. Հին կարգերում լավ հողերն ունեւն պատկանում:

31. Ք Ո Չ Ը

Ահա գարնան հետ և շարան-շարան  
Դաշտավայրերից դեպի զով սարեր,  
Չգվեց սայլերի, ուղտերի քարվան.  
Փախչում են շողից թե թուրք, թե հայեր:  
Լեռների տոնն են մարդ ու անասուն  
Ուրախ յերգելով դիմում են սարեր,  
Մոռնալով ձմռան քաշած վայնասուն,  
Ծաղիկ փնջերով անցնում են ձորեր:  
Անցնում են արագ քոչ-քոչի միջով,  
Գարնան արևից փայլում են զենքեր,  
Յե՛վ թարմ, կենսաբույր թավիշ կանաչով  
Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:  
Մայրում են, բայրում գառնուկն ու մաքրին,  
Թնգում կովերի, հորթերի բառաչ:  
Իսկ տրտնգալով գոմեշը ձագին  
Կանչում է դանդաղ՝ վազելով առաջ:  
Վազում են հոգնած շները հոտի  
Յե՛վ լեզուն հանած թանչին են տալիս.  
Լսվում է հանկարծ ձայնը լակոտի,  
Վոր քոչից ընկած՝ կալանչ է տալիս:

Քարավանի ծայրը սարերը հասավ,  
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.  
Վրան վրանի յետևից բաավ,  
Ծաղիկները մե՛ջ գույն-գույն, սիզավեա.  
Արաչուխ, դագա, անվերջ վրաններ,  
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,  
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,  
Հենվեցին մեկ-մեկ բարձր քարավին:

32. ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Յերկու ընկեր անտառում ընկույզ եյին ժողո-  
վում. հանկարծ նրանց առաջ մի արջ դուրս յե-  
կավ: Մեկը փախավ, բարձրացավ ծառը, թաքնվեց,  
իսկ մյուսը մնաց իր տեղում, ընկավ գետին ու  
մեռած ձևացավ:

Արջը մոտեցավ նրան, սկսեց հոտ քաշել, իսկ  
նա անշարժ ընկած էր, մինչև անգամ շունչը  
բռնել էր:

Արջը հոտ քաշեց, հոտ քաշեց և, կարծելով թե  
մեռել է, հեռացավ:

Գաղանը վոր հեռացավ, մյուսը վեր յեկավ  
ծառից և սկսեց ծիծաղել ընկերոջ վրա. «Հ՞ը, արջն  
ի՞նչ ասաց ականջիդ»:

«Ասաց՝ վատ են այն մարդիկ, վոր վտանգի  
ժամանակ իրենց ընկերներին թողնում, հեռա-  
նում են»:

33. ԲԱՐՏԻՆ ՅԵՎ ԲԱՄԲԱԿԵՆԻՆ

Յերկրագործները մի բարտի ծառի մոտ ջրում  
եյին բամբակի արտը և միմյանց պատվիրում,  
վոր զգուշ մնան, բամբակի ծառերը չկոխտան:

Բարտին վոր լսեց, թե բամբակին ել են ծառ  
ասում, վրա բերեց դայրացած. «Ի՞նչ ել ծառ  
ասեն՝ դրան ել: Յես այսքան բարձր ու հաստ եմ,  
այսքան մեծ տեղ եմ բռնում, իսկ դա՞ մի չնչին  
թփիկ»:

Բամբակենին այս վոր լսեց, ասաց համարձակ.  
«Ճիշտ ե, գոռոզ բարտի, հաստ ու բարձր ես դու,  
բայց անողուտ. վնչ պտուղ ունես, վնչ տախտակի  
ես պետք, վնչ ել լավ կրակ ես, տալիս: Մինչդեռ  
յես, թեև սկար և կարճահասակ եմ, բայց մարդ-  
կանց համար շատ ոգտակար եմ. յես հագուստ եմ  
դառնում վոչխարի բրդի պես, վոչ ել պակաս եմ  
վուշի կտավից կամ շերամի մետաքսից»:

Բարտին գլխիկոր լսեց ամոթից:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Մեքսիկա — արդյուն:

Վուշ — բույս, վորից կտավ են պատրաստում:

34. ՃԱՆԱՐԱԿ

Մանիբ, մանիբ, իմ ճախարակ,  
Մանիբ սպիտակ մալանչներ,  
Մանիբ թելեր հաստ ու բարակ,  
Վոր ես հոգամ իմ ցավեր:

Տիգրանիկս գուլպա չունի,  
Հանգ ե գնում վոտաբաց,  
Գաբրիելս չուխա չունի,  
Միշտ անում ե սուզ ու լաց:

Ձվալ չունենք, չաթու չունենք,  
Վնչ սամոսեն, վնչ պարան,  
Այսպես աղքատ դեռ յեղած չենք,  
Կարվել ե ամեն բան:

Դեռ հարս եյի, վոր գործեցի  
Քանի կապերտ, խալիչա,  
Բայց դրանցից շուտ զբկվեցի,  
Հիմա չունեմ մի քեչա:

Կարմիր որս, յերբ սևացավ,  
Պարտքը մնաց թեև քիչ,  
Պարտատիրոջ սիրան ել սեցավ,  
Յեկավ տարավ ամեն ինչ:

Մանիբ, մանիբ, իմ ճախարակ,  
Մանիբ սպիտակ քուլաներ,  
Մանիբ թելեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:

35. ԱՆԱՊԱՏՈՒՄ

Մեկ արար մոլորվել եր ամայի անապատում.  
ամբողջ յերկու որ նա վոչինչ չեր կերել ու խմել:  
Նա քաղցից ու ծարավից մեռնելու վտանգի մեջ  
եր: Վերջապես յերեկոյան դեմ հասավ մի ջրհորի  
մոտ, վորտեղ ճանապարհորդները սովորություն  
ունեյին ջուր տալու իրենց ուղաներին:

Սյնտեղ ավագի վրա նա հանկարծ նկատեց մի կաշվե քսակ:

— Ինչ լավ յեղավ,— բացականչեց նա՝ վերցընելով քսակը,— յերևի արմավ կամ ընկույզ կլինի մեջը:

Լի այս քաղցր հույսով՝ նա բաց արեց քսակը, նայեց և տխուր հառաչեց.

— Սվանդ, մարգարիտներ են միայն:

ԲՍՈՒԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Սվանդ — սփոս:

Արմավ — խուրմա:

### 36. ԼԵՌՆԱՅԻՆ ՎՏԱԿԸ

Մենք իջանք ձորակը, ուր հոսում էր գյուղի լեռնային վտակը: Չնայելով ջրի փոքրության՝ նա շարունակ խոխոջում էր և աղմկում, վորովհետև իջնում էր աստիճանավոր բարձրություններից, վորոնցից յուրաքանչյուրն առանձին առած, ներկայացնում էր մի իսկական գեղանկար պատկեր: Մենք հետզհետե դիտում էինք այդ պատկերները և զվարճանում:

Մի տեղ ժայռերը միմյանց վրա կուտակված՝ փորձում էին, կարծես, վտակի հոսանքն արգելել. իսկ սա ավազով ու խճով նրանց խորշերը լցրած՝ իր փրփրուն ալիքները գահավիժում էր ժայռերի բարձունքից: Մի ուրիշ տեղ մորենին, վայրի վարդը, կամ նոնենին գետակի յերկու ավերը գրաված՝ իրենց ճկուն վոստերը դեպ իրար ձգելով և իրար փաթաթվելով՝ կազմում էին ջրի վրա մի

կանաչադարդ կամուրջ և այդպիսով հոսանքը մեր աչքերից ծածկում: Մի յերրորդ տեղ ուռենին՝ կանաչագեղ վոստերն աջ ու ձախ տարածելով՝ հովանավորում էր մի փոքրիկ ու վճիտ լճակ, վորի ջուրը, կարծես, կարկաչելուց հոգնած՝ հանգստանում էր այդտեղ ժայռերի խորշում և իր ջինջ հայելու մեջ արտացոլում թե ավի կանաչադարդ ուռենին, թե ժայռերն ու թփերը և թե յերկնքի կապուտակը:

ԲՍՈՒԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ջինջ — պարզ, մաքուր, վճիտ:

Դանավիժել — վերից վայր ընկնելը, թափվելը:

խորշ — փոս, ծակ, խոռոչ, մի վորևե անկյուն:

### 37. ԳԱՐՈՒՆՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Սոսափում ե կուսական ստվերախիտ անտառը. տեղ—տեղ նոսր տերևների ճեղքերից ներս են ընկել արևի վոսկեզույն ճառագայթները և հազիվ-հազ լուսավորում են ցողապատ սեղերով ծածկված գետինը:

Յերկար առաջ ենք գնում նեղ ու վոլորապտույտ կածանով. մեկ ել հանկարծ մեր առաջ բացվում է մի ձոր՝ իր լեռնային վտակով: Թըռչունները նստել են փոքրիկ ջրվեժի վրա կախ ընկած սոսիների քնքույշ ճյուղերից, ճոճվում են անվերջ, ծըլվըլում, հորինում են քաղցր յերգեր:

Միայն հոպոպն է, վոր շարունակ թափառում է դես ու դեն և միշտ կրկնում է իր թախծալի տրտունջը՝ «հոպ-հոպ, հոպ-հոպ»:

Աեգ — կանաչ խոտ:

Կոտան — նեղ ճանապարհ, անցք:

Սասափյուն — շրշյուն, տերեւի մեղմ ձայն քամուց:

Ցողապատ — ցողով ծածկված:

Կուսական անտառ — ծառեր չկարծված անտառ:

### 38. ԼԵՆՏԵՔՍՏԻԼԻ ԲԱՆՇԵՆՈՒՄ

— Ահա մեր տունը, — ընկերուհու հետ սենյակի զըռնից ներս մտնելով՝ ասաց տեքստիլ գործարանի բանվորուհի Հայկուշը:

— Ոհո, ասա՛ կարգին պալատի պես շենքուհն ես ապրում, ելի:

— Հապա, Սիրվարդ, չես կարող յերևակայել, թե վորքան եմ ուրախացել նոր սենյակ ստանալու համար: Այս շենքի մեջ ամեն հարմարություն կա: Ամեն անգամ, վոր սենյակիս ելեկտրական լամպը վառում եմ, սիրտս փառավորվում ե, սենյակիս պատերը կարծես ծիծաղում են զեմքիս: Մանավանդ՝ յերբ աշխատանքից հողնած գալիս եմ, մտնում լողարանն ու հանգիստ լողանում եմ ինձ համար:

— Իսկ յերբ ել շենքի մեջն ե, Հայկուշ, — հարցրեց ընկերուհին:

— Իհարկե, հենց սենյակիս մօտ, յերբ ուզում ես՝ լողացիր, յերբ ուզում ես՝ լվացք արա:

— Իսկապես վոր շատ լավ ե:

— Հապա մի պատուհաններին նայիր: Ամեն առավոտ արևը ծագում ե թե չե, առաջին հերթին

իմ զեմքն ե համբուրում: Ի՛նչքան լավ ե արևոտ ու չոր սենյակում ապրելը:

— Նոր գիտես, Հայկուշ, արևը կյանքի աղբյուր ե. առանց արևի վոչ մի կյանք չկա:

— Խեղճ հայրս մեռավ առանց արևի. այն ժամանակ զառն եր կյանքը, Սիրվարդ, մենք՝ հայրս, մայրս ու յես ապրում եյինք գեանափոր մի տնակի մեջ: Այն ժամանակ յես 10 տարեկան եյի: Տարիներն անցան, ամեն ինչ փոխվեց: Այժմ վոչ միայն յես, այլ այս շենքի բոլոր սենյակներում ապրում են մեր գործարանի բանվորներն ու նրանց ընտանիքները: Բոլոր սենյակներն ել լուսավոր են, մեծ-մեծ պատուհաններով, չոր, բուլորն ել ունեն իրենց հարմարությունները:

— Իսկ խոհանոց:

— Յուրաքանչյուր տնվոր, իհարկե, ունի իր խոհանոցը: Յես ել ունեմ, բայց քիչ եմ գործածում: Շենքի ներքևի մասում ճաշարան ունենք, վորտեղից եժան գնով և լավ վորակի ճաշ ենք ստանում: Ի՛նչ շատ ուրիշ հարմարություններ ունի շենքը, վորոնցից ոգտվելու կարիք չունեմ յես առայժմ:

— Այդ ի՛նչ հարմարություններ են, վորոնցից ոգտվելու կարիք չունես դու:

— Ա՛յ, որինակ, շենքի մի մասում տեղավորված ե մանկամսուրը, իսկ առայժմ չեմ ոգտվում, վորովհետև յերեխա չունեմ, — ժպտալով ասաց Հայկուշը:

Վորսից վերադառնալիս՝ անց եյին կենում մի պարտեզի միջով: Շունս վազում եր իմ առջևից:

Նա հանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց կամաց ու զգուշ առաջ գնալ՝ կարծես փորսի հոտ եր առել:

Յես նայեցի ու փոքր ինչ հեռուն ճամփի վրա աեսա մի փոքրիկ ճնճղուկ, վորի կտուցի շուրջը գեղին եր դեռ, իսկ գլուխն ազվամազով ծածկված: Նա ընկել եր բնից ու անշարժ պառկել եր, միայնակ ու անոգնական, հագիվ դուրս յեկած փոքրիկ թևերը փռած:

Յերբ շունս ծանրաքայլ մոտենում եր նրան, հանկարծ մոտակա ծառի վրայից մի մեծ, սև կրծքով ճնճղուկ, քարի պես ցած նետվեց, ընկավ ուղղակի շան առաջը և հուսահատ ու ծղրտոցով մի յերկու անգամ թռավ դեպի շան դունչը:

Նա հարձակվում եր, վոր փրկի, պահպանի ձագին... Բայց նրա փոքրիկ մարմինը դողում եր սարսափից: Նրա ծղրտոցը կատաղի յեր: Նա ուժից ընկնում եր, նա իրեն զոհում եր:

Ինչ ահագին հրեշ պիտի յերևար նրա աչքին շունը... Բայց և այնպես նա նստած մնալ չկարողացավ, բարձր ու անվտանգ ճյուղին...

Շունս կանգ առավ, յետ քաշվեց...

Յես շտապեցի շվարած շանս յետ կանչել և հեռացա՝ զգալով մեջս մի պատկառանք դեպի այդ փոքրիկ թռչունը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Պատկառանք — հարգանք, ակնածություն:

չեռ — հսկայական մեծությամբ կենդանի:

Դու կապուտակ ծովով արի,  
Թեթեվ, թեթեվ թեվով արի,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան յերգով, կանչով արի:  
Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,  
Արի՛, արի՛, գարուն դու բեր:

Սեվիկ-մեվիկ աչիկ ունես,  
Մկրատաձեվ պոչիկ ունես,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:  
Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,  
Արի՛, արի՛, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,  
Անծիծեռնակ գարուն չկա,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով՝ կանչով արի:  
Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,  
Արի՛, արի՛, գարուն դու բեր:

#### 41. ՀՐԴԵՂԸ ՆԱՎԹԱՀԱՆՔՈՒՄ

Հրդեհն արդեն բավական ընդարձակվել եր: Այրվում եր ամենաարդյունաբեր հորերից մինը: Կրակը, բուրգի ստորին մասից սրբնթաց դուրս գալով, շտապում եր ընդգրկել ամբողջ աշտարակը: Յերկնքի հորիզոնի վրա ձգվել եր մթին ծխի մի լայն ժապավեն, վոր քամու ընթացքով տարածվում ե հեռու և հեռու:

Բանվորները շրջապատել էին վիթխարի խա-  
րուկը, կազմել կենդանի ողակ սարսափած դեմ-  
քերի, ապշած աչքերի: Մի խումբ մտել եր ասպա-  
րեզ և աշխատում եր դուրս բերել բուրգի տակից  
մեքենան, միակ բանը, վոր կարելի յեր կրակից  
ազատել:

Հանքերում ու գործարաններում կրակը յեր-  
բեմն տարածվում ե հողմի արագությամբ: Այս-  
տեղ այրվում ե ամեն ինչ, նույնիսկ ողն ու յեր-  
կիրը՝ ամենուրեք տարածված նավթի ու գազի  
շնորհիվ: Շատ անգամ մարդիկ հազիվ լսում են  
տազնապալի սուլոցները և արդեն նրանց կյանքը  
վտանգի մեջ ե: Դեռ լավ ե, յեթե կրակն սկսվում  
ե բուրգից կամ շենքից: Իսկ յեթե կրակն սկսվել  
ե նավթամբարից, վտանգն անխուսափելի յե: Ամ-  
բարի ազատ տարածության մեջ կուտակված գա-  
զը, ընդհարվելով կրակի հետ, պայթում ե հարյու-  
րավոր թնդանոթների ուժով և կրակի հեղեղն  
սփռում չորս կողմ:

Բանվորներն ավելի գոռոռում էին, քան  
ողնում: Միմյանց հրում էին, միմյանցից առաջ  
վազում, վայր ընկնում, վեր կենում թրջված, ցե-  
խոտված:

Կրակն արագ լափում եր բուրգի տախտակները,  
ինչպես սոված կենդանին լափում ե չոր տերևները:  
Բյուրավոր խոշոր կայծեր վամփուշտի պես, բարձ-  
րանում էին վեր, ծխի ալիքների մեջ կատաղի  
պտույտներ գործում և թափվում ներքև: Գոյացել  
եր մի սքանչելի հեղեղե անձրև: Կայծերը կիտվում  
էին գեանի վրա ձյան նման:

Կային միամիտ բանվորներ, վոր ճգնում էին  
Չրով հանդցնել բուրգը, մի բան վոր անհնարին  
էր: Կրակը ծիծաղում եր Չրի բավականաչափ հո-  
սանքի վրա, վոր չբռնվելով դուրս եր գալիս  
ուետինե խողովակներից, ձեռնաշարժ Չրմուղի մի-  
ջոցով: Կրակի անուրի լեզուները, ընդհարվելով  
հակառակ տարրի հետ, արձակում էին դիվական  
քրքիչներ: Զուրը, մի վայրկյան շոգի դառնալով,  
ավելի ուժ եր տալիս կրակին, քան կովում նրա  
հետ:

Փորձված բանվորներն աշխատում էին նավ-  
թամբարներն ապահովել հրեղեն անձրեից: Այրվող  
բուրգից փոչ այնքան հեռու կար նավթով լի մի  
գեանափոր շտեմարան: Մոտ քառասուն բանվոր  
մոռանալով ամեն վտանգ, հավաքվել էին նրա  
հողային կտուրի վրա և թրջված թաղիքներով  
ծածկում էին բաց տեղերը, վորտեղից դուրս եր  
գալիս նավթային գազը: Մի թեթև ընդարում  
կրակի հետ և նավթամբարը պիտի պայթեր իր  
հետ սղը ցնդեցնելով բանվորներին:

#### 42. ԴՍՐԻՍԱԿԻ ՁՈՐԸ

Վլադիկավիազից (Որշոնիկիձե) դուրս գալով,  
մի քանի ժամից հետո արդեն դանվում եմ Դար-  
խալի ձորի մեջ: Ողբ մոռայլ ե, խոնավ և ցուրտ:  
Այ կողմս ապառաժներ, ձախ կողմս ապառաժներ,  
գնում եմ և շարունակ նայում վեր, բարձր, վոր-  
տեղից կիսաքանդ կամարների ձևով գլխիվայր  
կախվել են անագին ժայտեր: Նրանք նայում են  
ցած և սարսափ ներշնչում ինձ: Յեթե մի կտոր,

Թեկուզ մի չնչին մասը պոկվի իր տեղից՝ ինձ  
կառքի հետ միասին փոշու հետ կհավասարեցնի։  
Բնությունը մտադիր չի յեղել այստեղ ճանապարհ  
բանալու, բայց հանդուգն մարդն ինչեր չի արել։  
Ընթանում եմ դեպի առաջ և բարձր։ Մեր  
ուղին սկսվում է ժայռերի ստորին փեշերից և  
վոյոր-մոյոր պտույտներով բարձրանում դրանց  
կրճքի վրայով ու դիմում ձյունապատ գագաթնե-  
րի կողմը, վորոնք այս միջոցին ծածկվել են սպի-  
տակ և մոխրագույն ամպերով, այն յերկնային  
սավանով, վորի միջից յերբեմն-յերբեմն գուրս են  
ցայտում հատիկ-հատիկ մշտականաչ յեղենիները  
և զարձյալ անհետանում։ Ապառաժներն անընդ-  
հատ միմյանց են հաջորդում։ Նրանք բազմաթիվ  
և բազմաձև ծալքերով ձգվում են անդնդային  
մռայլ ձորի միջով և միախառնվում անթափանց  
թանձր կապուտակի հետ, ուր վարագուրված է  
գարնան քնքույշ յերկնակամարը։ Ամեն տեղ տի-  
րում է խլացուցիչ աղմուկ։ Կատաղի Թերեքը գո-  
ռում-գոչումով գլխիվայր է վազում քարքարոտ  
հատակի վրայից և ամեն ինչ քարուքանդ անում,  
անխնա շարտում է այս ու այն կողմ ժայռերի  
միջից պոկած ահագին բեկորները։ Դա նման չե  
սովորական արագահոս գետերին, դա կատաղի յե  
և իր կատաղությունը հասցրել է գագաթնակետին։  
Հագարավոր պտույտներ անելով քարի յե գար-  
կում, ամեն ինչ արմատախիլ անում, ջարդում

ու փշրում։ Նա չի ուզում ջրի նմանվել, ամբող-  
ջապես փրփուրի յե փոխվել։ Մանր ու խոշոր սի-  
րուն առվակներ ամեն մի քայլափոխում ծնունդ  
են առնում ժայռերի կրճքի միջից, կարկաչելով,  
ուրախ-ուրախ վազում են ներքև և կլանում աղմը-  
կալից Թերեքի կողմից։

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Հերոսուհին.—Արագի . . . . .	38
2. Կիսաա տունը.—Արագի . . . . .	39
3. Բուդյոնին և սպիտակները . . . . .	40
4. Քսանվեցի յերգը.—Հ. Հախոբյան . . . . .	41
5. Յերկու մեքենա . . . . .	43
6. Ինտերնացիոնալ.—Թարգ. Յե. Չարենցի . . . . .	44
7. Լենինի մահը . . . . .	45
8. Բանտում.—Մ. Ուլյանովա . . . . .	48
9. Քրդական լրագիր . . . . .	49
10. Կոյունտեսու-թյունն ազատագրեց կնոջը.—Սալիմ . . . . .	51
11. Կոյունտեսային կարգերը բարձրացրին նրան . . . . .	54
12. Յեկ, գարնան անձրև.—Ալ. Մասուրյան . . . . .	54
13. Քո գործը սովորելն և . . . . .	55
14. Իմ ընկեր Լիպոն.—Յե. Չարենց . . . . .	57
15. Չապահ . . . . .	59
16. Սանիաար շունը . . . . .	60
17. Ասիլի յերգը.—Վ. Գրիգորյան . . . . .	61
18. Կոխը.—Հովհ. Թումանյան . . . . .	62
19. Տուֆի յերգը . . . . .	62
20. Դժվար տարի.—Հովհ. Թումանյան . . . . .	63
21. Շարքացանը . . . . .	64
22. Ժամի չորսին.—Լարին . . . . .	65
23. Ընկեր Սաալինին.—Սաախանովականների դիմումից . . . . .	66
24. Խորհ. Հայաստանի 15 տարին.—Յե. Չարենց . . . . .	68
25. Գիքորը.—Հովհ. Թումանյան . . . . .	69

26. Նեսուլի քարաբաղնիսը.—Հովհ. Թումանյան . . . . .	71
27. Պայթյունը հանքում.—Մելիք—Հայկազյան . . . . .	73
28. Միությունն ուժ և . . . . .	75
29. Հեղեղը.— ըստ Վրթ. Փափազյանի . . . . .	76
30. Ռուշանի քարափը.—Ն. Չարյան . . . . .	77
31. Քոչը.—Վ. Միրաբյան . . . . .	78
32. Յերկու ընկեր . . . . .	79
33. Բարտին և բամբակներն . . . . .	80
34. Ճախարակ.—Ղ. Աղայան . . . . .	80
35. Սնապատում . . . . .	81
36. Լեոնային վտակը.—ըստ Մուրացանի . . . . .	82
37. Գարունն անտառում . . . . .	83
38. Լենտեքսաիլի բանշենում.—Գ. Սարյան . . . . .	84
39. Ճնձղուկ.—Ա. Տուրգենևիլ . . . . .	86
40. Ծիծեռնակին.—Հովհ. Թումանյան . . . . .	87
41. Հրդեհը նավթահանքում.—Շիրվանզադե . . . . .	87
42. Դարիալի ձորը.—Գ. Բաբինջաղյան . . . . .	89

Տեխ. խմբագիր՝ Գ. Չեչյան  
Շապիկը յեվ նկարները՝ Ստ. Ալբրեցյանի  
Ձեռագրերը՝ Հայկ. Ավեսիսյանի  
Մտագրեց՝ Հ. Կոբոդյան

4092



Հանձնված է արտադրության 1 սպասուսի 1936 թ.  
Ստորագրված է ապագրության 28, V III 1936 թ  
Քղթի չափը 34/см տիրած 80000:  
Հրատարակ 3823: Գրափ. լիազոր II—1156, պատվեր 965  
Գեանհատի ապաբան, Յերևան, II Գնունի 4

« Ազգային գրադարան



NL0249284

Հ Մ Տ Վ Ո Ղ Ա Յ Բ Ո Ի Բ Ե Ն

Փակցրու հաստ թղթի կամ բարակ ստվարաթղթի (կա ըտոն) վրա: Կտրատիր և ստաց-  
ված տառերից բառեր կազմիր: Շարժական տառերը պահիր առանձին տուփի մեջ:

Ա	Ա	ա	ա	ա	Բ	բ	բ	Գ	գ	գ	Դ	դ
դ	Ե	ե	ե	ե	Զ	զ	զ	Ը	ը	ը	Թ	թ
թ	Ժ	ժ	ժ	Ի	ի	ի	Լ	լ	լ	Խ	խ	խ
Ծ	ծ	ծ	Կ	կ	կ	Հ	հ	հ	Ձ	ձ	ձ	Ղ
ղ	ղ	Ճ	ճ	ճ	Մ	մ	մ	մ	Յ	յ	յ	յ
Ն	ն	ն	ն	Շ	շ	շ	Ո	ո	ո	Ու	ու	ու
ու	Չ	չ	չ	Պ	պ	պ	Ջ	ջ	Բ	բ	բ	Ս
Ս	ս	ս	ս	Վ	վ	վ	Տ	տ	տ	տ	Բ	բ
բ	Յ	յ	յ	Փ	փ	փ	Ք	ք	ք	Ֆ	ֆ	ֆ

917

8035

ԳԻՆԸ ԿԱԶՄՈՎ՝ 1 Ռ. 5 Կ.



КНИГА ДЛЯ ЧТЕНИЯ  
для школ взрослых,  
по ликвидации  
малограмотности  
Гиз ССР Армении, Ереван, 1936 г.